

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 173  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Երևանի հ. 99 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի  
ուսուցիչ՝ **Գայանե Վոլոդյայի Սիմոնյան**

*«Սովորողի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և  
ստեղծագործական ունակություն զարգացնելը՝ առարկայի  
դասավանդման ընթացքում»* հետազոտական աշխատանք

## **Չետագոտական աշխատանք**

**Թեմա՝** սովորողի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություն զարգացնելը՝ առարկայի դասավանդման ընթացքում

**Ուսուցիչ՝** Գայանե Սիմոնյան, ք. Երևան հ. 99 միջնակարգ դպրոց

**Ղեկավար՝** Լիդա Ավանեսյան

# Բովանդակություն

## Ներածություն

**Գլուխ 1:** Սովորողի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություն զարգացնելը

**Գլուխ 2:** Ուսուցումը միջին դպրոցում

**Գլուխ 3:** Ուսուցումը ավագ դպրոցում

## Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

## Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել տարբեր մեթոդներ և մեխանիզմներ, որոնք կկարողանան ապահովել կրթության մեջ աշակերտի ստեղծագործելու, նախաձեռնելու ունակությունները:

Կրթական գործընթացում աշակերտի նախաձեռնողականությունը, ստեղծագործելու ունակությունը հենքն է արդյունավետ ուսուցման:

Մաթեմատիկան այն առարկան է, որի միջոցով հնարավոր է զարգացնել աշակերտի տրամաբանությունը, վերլուծելու և հիմնավորելու ունակությունը:

Մաթեմատիկական տարբեր առաջադրանքներ ամրապնդում և զարգացնույ են հիշողությունը:

Աշակերտը պետք է որոշակի խնդիրների լուծման սեփական տարբերակը առաջադրի, ուսուցիչը չպետք է պարտադրի լուծման իր տարբերակը:

Աշակերտի մտքի մեխանիկական հիշողությունը զարգացնելով, խնդրի լուծման պատրաստի ալգորիթմը մատուցելով, անհնար է հասարակության համար կերտել ինքնուրույն մտածող անհատ: Ուսուցչի կարևորագույն խնդիրն է կրթական պրոցեսում կերտել մարդ-անհատ, ով պատրաստ կլինի ինտեգրվել հասարակությանը: Այս ամենի հիմքում կարևորում են աշակերտի կամային բարձր որակների կերտումը: Սեփական արարքների և դրանց հետևանքների համար պատասխանատվության զգացումով օժտված անհատի ձևավորումը:

Լայնախոհ, ազնիվ, նվիրյալ մանկավարժների դերը այս գործում չափազանց կարևոր է:

Նշեմ նաև, որ կամային որակներ՝ կամքի ուժ, համառություն, նպատակասլացություն ձևավորելու գործում անուրանալի է մաթեմատիկայի դերը:

Աշակերտը մաթեմատիկական խնդիր լուծելիս կենտրոնացնում է իր ունակությունները, գիտելիքները և փորձում հաղթահարել այն արգելքները, որոնք խանգարում են հասնել ճիշտ վերջնարդյունքի:

Մանկավարժական տեխնիկական պետք է ծառայեցնել հասնելու բաղձալի նպատակի.

- Մանկավարժական տեխնոլոգիան՝ հոգեբանամանկավարժական հրահանգների ամբողջությունն է, որը որոշում է ուսուցման մեթոդների, հնարների, դաստիարակչական միջոցների հատուկ համախումբը: (Բ. Տ. Լիխաչև)
- Մանկավարժական տեխնոլոգիան գործողությունների հաջորդականությունն է, որը թույլ է տալիս ստանալ արդյունք ամենանվազ ծախսերով, համակարգային մտածողության եղանակի ներդրումը մանկավարժության մեջ, որը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը դարձնել ամբողջապես կառավարելի:
- Մանկավարժական տեխնոլոգիան ուսումնական գործընթացի իրականացման բովանդակային տեխնիկան է: (Վ. Պ. Բեսպալկո)
- Մանկավարժական տեխնոլոգիաները ուսուցումը դարձնում են արդյունավետ ու մատչելի, որն էլ նպաստում է երեխաների ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Ուսուցիչը պետք է ձգտի նրան, որ երեխաները կարողանան ձեռք բերել գիտելիքներ և ինքնուրույն վերլուծել իրավիճակներ և կատարել եզրահանգումներ:

Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխակապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացում:

# Գլուխ 1

## Ուսուցումը միջին դպրոցում

Սովորողի ինքնուրույնության և ստեղծագործելու ունակության զարգացումը:

Համաշխարհային մանկավարժական պրակտիկան հարուստ փորձ է կուտակել փոխներգործման մեթոդների տեսական մշակումների և գործնական կիրառությունների վերաբերյալ: Այս մոդելի առանձնահատկությունն ուսուցման գործընթացի հնարավորիսս ակտիվացումն է, ինչպես նաև միջավայրի ստեղծումը, որում սովորողը դառնում է իր իսկ ուսուցումը կազմակերպող անձ, գործընթացի սուբյեկտը՝ ինքնուրույնության բարձր աստիճանով:

Փոխներգործման մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում՝ աշակերտ-ուսուցիչ համակարգում: Փոխներգործման մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ուսուցման գլխավոր նպատակը պետք է լինի աշակերտի անձի ամբողջական զարգացումը, անձի ընդունակությունների, իմացական և մտավոր ինքնուրույն գործունեության բացահայտումը:

Ուսուցչի օժանդակությամբ աշակերտն ինքն է բացում դեպի իմացությունտանող ուղին և ձեռք բերված գիտելիքը դառնում է նրա իսկ գործունեության արդյունքը:

Այս ամենին հասնելու մեթոդները և տեխնիկաները բազմազան են. աշխատանք փոքր խմբում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, էվրիստիկ զրույցով, դաս-սեմինարի, մտքերի փոխանակման, բանավեճի, գործարար խաղերի, համագործակցային մոդելավորման տեխնիկաների կամ նախագծերի մեթոդ և այլն:







## Գլուխ 2

### Ուսուցումը ավագ դպրոցում

Սովորողի անհատականության ձևավորումը, նախաձեռնողականության զարգացումը:

Նարակրթական ավագ դպրոցները, որպես այդպիսին, չունեն կրթական ծրագիր: Ըստ էության 10-12-րդ դասարանների ուսումնական նյութը նախորդ տարիների կրկնությունն է: Սա անհետաքրքրություն է առաջացնում աշակերտի մոտ և վերջինս հոգնում է նույն բանը սովորելուց: Որոշ մասնավոր դպրոցներ ունեն կրթական հատուկ մշակված ծրագիր: Օրինակ՝ «Այբ» դպրոցը, իր առջև դնելով լավագույն կրթական համակարգերից լավագույն կրթական ծրագրերը վերցնելու և մեկ ամբողջական պատկերի մեջ համադրելու խնդիրը, հասել է հաջողության: Այնտեղ նախագծերը կազմվում են ըստ Հովարդ Գարդների «Բազմակի տաղանդների տեսություն» աշխատության, հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները:

Ավագ դպրոցում պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտի օժտվածության և առանձնահատկությունների վրա: Պետք է կազմել աշակերտի անհատական ուսումնական ծրագիր: Հայաստանում ավագ դպրոցը դեռևս կայացման փուլում է: Այն որպես նախամասնագիտական կրթություն ապահովող օղակ է, պետք է հետևողական վերաբերմունքի արժանանա:

Բազմաբնույթ մտածողության տեսությունն ամբողջությամբ ներկայացվել է Յոզեֆ Գարդների «Գիտակցության կառուցվածքը» (1983թ.) գրքում: Նա կարծում է, որ յուրաքանչյուր մարդու հատուկ է մտածողության, ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, որոնք հազվադեպ են գործում իրարից անկախ:

Գարդները առանձնացնում է մտածողության 7 տիպեր.

1. լեզվական մտածողություն
2. տրամաբանական/մաթեմատիկական մտածողություն, որը կապված է տրամաբանության վերացարկման, դատողության, քննադատական մտածողության հետ, այն նաև կապված է պատճառահետևանքային կապերը հասկանալու ունակությունների հետ
3. տարածական մտածողություն
4. երաժշտական
5. մարմնաշարժողական
6. միջանձնային (վերջինս լավ զարգացած է մանկավարժների մոտ)
7. ներանձնային





## Եզրակացություն

Այսպիսով համաշխարհային մանկավարժության բազմամյա փորձը և կրթության ժամանակակից պահանջները խաչվելով, ուսուցչին ստիպում են լինել ստեղծագործող, պրպտող, նորարարություններ ձեռնարկող և նախաձեռնող:

### Ուսուցչի տասը պատվիրանները. (Ջ. Փոյա)



1. Յետաքրքրվեցե՛ք ձեր առարկայով:
2. Իմացե՛ք ձեր առարկան:
3. Իմացե՛ք, թե որ ճանապարհով կարելի է ուսումնասիրել այն, ինչը ձեզ անհրաժեշտ է: Ուսումնասիրման լավագույն ձևն է ինքնուրույն հայտնաբերելը:
4. Կարողացե՛ք կարդալ աշակերտների դեմքերը: Ջանացե՛ք տեսնել, թե ինչ են սպասում նրանք ձեզանից, ըմբռնել նրանց դժվարությունները. կարողացե՛ք ձեզ իրենց տեղում պատկերացնել:
5. Մի՛ սահմանափակվեք մերկ տեղեկատվությամբ. ջանացե՛ք աշակերտների մոտ որոշակի ունակություններ, խելքի անհրաժեշտ կերտվածք և կանոնապահ աշխատանքի սովորություն զարգացնել:
6. Ջանացե՛ք նրանց կռահել սովորեցնել:
7. Ջանացե՛ք նրանց ապացուցել սովորեցնել:

8. Հայտնաբերե՛ք ձեր խնդրում այն, ինչը կարող է ուրիշ խնդիրների լուծման ժամանակ պետք գալ. տվյալ կոնկրետ իրադրության խորքից ջանացե՛ք ընդհանուր մեթոդը երևան հանել:
9. Մի՛ հայտնեք անմիջապես ձեր գաղտնիքը, թող աշակերտները փորձեն կռահել այդ գաղտնիքը, մինչ այն նրանց կհաղորդեք. թողե՛ք աշակերտներն իրենք հնարավորին չափ շատ բան գտնեն:
10. Օգտագործե՛ք գլխի գցող ցուցումներ, բայց ձեր կարծիքը մի՛ պարտադրեք:



Օգտագործված գրականություն՝ համացանց